



ILTA Code of Ethics, Armenian translation
Translators: Armen Kharazian and Louisa Baghdasarian

Լեզվական թեսթավորման միջազգային ընկերակցության (ILTA¹) Էթիկայի կանոնագիրք
(Ընդունվել է ILTA-ի Տարեկան ժողովին, Վանքուվերում, 2000 թ. մարտին)

Լեզվական թեսթավորման միջազգային ընկերակցության (ILTA) կողմից առաջին անգամ պատրաստված Էթիկայի այս կանոնագիրքը բարոյական փիլիսոփայության վրա հենված ու բարեխիղճ մասնագիտական գործունեության ուղեցույց ծառայող սկզբունքների հավաքածու է (չնչին փոփոխություններով, այն 2018 թ. հունվարին արժանացել է ILTA-ի Գործադիր կոմիտեն հավանությանը): Այս փաստաթուղթն օրենք չէ, և ո՛չ էլ կանոնակարգ. այն գործունեության ուղենիշներ չի սահմանում, այլ պարզապես նպատակ ունի առաջարկել լեզվական թեսթավորման բոլոր մասնագետների կողմից դրսևորելիք ընդունելի էթիկական վարքագծի շեմ: Այս փաստաթուղթն առնչվում է մեկ այլ՝ Գործունեության ուղենիշներ² կոչվող փաստաթղթի հետ (ներկայացված է ILTA-ի կայքում): Էթիկայի կանոնագրքի հիմքում բարեհոգության, անգթության անընդունելիության, արդարության, ինչպես նաև ինքնուրույնության ու քաղաքացիական հասարակության նկատմամբ հարգանքի սկզբունքներն են:

Էթիկայի կանոնագիրքն ինը հիմնարար սկզբունք ունի, որից յուրաքանչյուրը ներկայացված է իր բնույթը պարզաբանող մի շարք ծանոթագրություններով: Այդ ծանոթագրությունները սահմանում են, թե ILTA-ի անդամներն ի՛նչ պարտականություններ ունեն և ի՛նչ՝ ոչ, կամ ինչպե՛ս պետք է իրենց ընդհանրապես դրսևորեն, կամ ո՞րը պետք է լինի նրանց, ինչպես նաև ողջ մասնագիտական հանրության նպատակը: Դրանք նաև մատնանշում են այդ սկզբունքների կիրառման մեջ ի սկզբանե առկա բարդություններն ու բացառությունները: Ծանոթագրությունները հավելյալ պարզաբանումներ են ներկայացնում Կանոնագրքով սահմանվող տույժերի մասին՝ հստակ սահմանելով, որ Կանոնագրքի պահանջները չկատարելը կարող է հանգեցնել լուրջ տույժերի, օրինակ՝ ILTA-ի Էթիկայի հանձնաժողովի խորհրդով ILTA-ի անդամակցության կասեցման: Թեև այս Կանոնագրքի աղբյուրը պատմական բնույթի նմանօրինակ այլ էթիկական կանոնագրքեր են, ներկայիս փաստաթուղթը միաժամանակ ձգտում է արտացոլել հասարակական ու մշակութային արժեքների հարափոփոխ հաշվեկշիռը՝ ողջ աշխարհով մեկ, և այդ պատճառով լեզվական թեսթավորողներն այն պետք է մեկնաբանեն դրան առնչվող Գործունեության ուղենիշների հետ համատեղ:

Մասնագիտական կանոնագրքերը սովորաբար նաև դրույթներ են ներառում մասնագիտական խղճի ու դատողության մասին: ILTA-ի Էթիկայի այս կանոնագիրքը լեզվական թեսթավորողներին չի ազատում այլ Կանոնագրքերով իրենց ստանձնած պարտականություններից ու պատասխանատվությունից, կամ

¹International Language Testing Association (ILTA).

²Guidelines for Practice.

իրավական օրենսգրքերի ներքո իրենց վրա տարածվող պարտավորություններից՝ թե՛ ազգային, և թե՛ միջազգային մակարդակով:

Լեզվական թեսթավորողը սեփական անկախ բարոյականությամբ առաջնորդվող գործակալ է և կարող է այնպիսի բարոյական դիրքորոշում ունենալ, որը հակասում է որոշակի գործողություններին իր ներգրավմանը: Նա բարոյական իրավունք ունի հրաժարվել այնպիսի գործողությունների մասնակցելուց, որոնք ոտնահարում են իր անձնական բարոյական համոզմունքները: Աշխատանքային պաշտոն ստանձնելիս, եթե լեզվական թեսթավորողն ակնկալում է, որ տվյալ պաշտոնում իրենից կպահանջվի ներգրավվել իր համոզմունքների հետ անհամատեղելի իրավիճակներում, ապա նա պատասխանատու է իր աշխատատուին, կամ հեռանկարային աշխատատուին այդ մասին տեղեկացնելու համար: Աշխատատուներն ու գործընկերները պատասխանատվություն ունեն ապահովել, որ նման լեզվական թեսթավորողն իր աշխատավայրում խտրականության չենթարկվի:

Էթիկայի կանոնագիրքն իր արտացոլումն է գտել Գործունեության ուղենիշներում (ներկայացված է ILTA-ի կայքում): Միաժամանակ, մինչ Էթիկայի կանոնագիրքը կենտրոնանում է մասնագիտության բարոյական հարթության ու արժեքների վրա, Գործունեության կանոնագիրքը սահմանում է մասնագիտական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ նվազագույն պահանջներն ու կենտրոնանում է մասնագիտական վարքի խախտումների և ոչ-արհեստավարժ վարքագծի կապակցությամբ պարզաբանումների վրա: Թե՛ Էթիկայի կանոնագիրքը, թե՛ Գործունեության ուղենիշները պետք է համահունչ լինեն մասնագիտության ոլորտում առկա կարիքներին ու դրա ներսում տեղի ունեցող փոփոխություններին, և ժամանակի ընթացքում այս Կանոնագրքերը ևս հարկ կլինի վերանայել՝ համապատասխանեցնելով դրանք լեզվական թեսթավորման ոլորտում ու հասարակության մեջ տեղի ունեցած փոփոխություններին: Էթիկայի կանոնագիրքը վերազնման կենթարկվի հինգ տարվա ընթացքում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ավելի վաղ:

Սկզբունք 1

Լեզվական թեսթավորողը պետք է հարգի թեսթ հանձնող յուրաքանչյուր անձի անհատականությունն ու արժանապատվությունը: Նա այդ անձին պետք է վերաբերվի հնարավորինս նպաստավոր մասնագիտական հայեցողությամբ ու լեզվական թեսթավորման ծառայություն տրամադրելիս պետք է հարգանք ցուցաբերի բոլոր անձանց կարիքների, արժեքների ու մշակույթի նկատմամբ:

Ծանոթագրություն

- Լեզվական թեսթավորողը չի կարող խտրականություն կիրառել իր թեսթ հանձնողների նկատմամբ, չի կարող նրանց շահագործել տարիքային, սեռային, ռասայական, էթնիկական, սեռական կողմնորոշման, լեզվական պատկանելության, ընտանեկան ծագման, քաղաքական պատկանելության կամ կրոնի բերումով, և չի կարող գիտակցաբար պարտադրել իր արժեքները (օրինակ՝ հասարակական, հոգևոր, քաղաքական, կամ գաղափարական)՝ այնքանով, որքանով նա տեղյակ է դրանցից:
- Լեզվական թեսթավորողը երբեք չի շահագործի իր հաճախորդներին ու չի փորձի նրանց վրա ազդել իր տրամադրած ծառայությանը, կամ իր կողմից իրականացվող հետազոտությանը չառնչվող նպատակներով:
- Լեզվական թեսթավորողի և նրան լեզվի թեսթ հանձնող անձի միջև սեռական հարաբերությունները միշտ ոչ-էթիկական են:
- Լեզվական թեսթ հանձնող անձանց (ներառյալ ուսանողների) մասնակցությամբ լեզվական թեսթավորում դասավանդելն ու ուսումնասիրելը պահանջում է այդ անձանց համաձայնությունը. այն նաև պահանջում է հարգանք անձանց արժանապատվության և մասնավորության նկատմամբ:

Ներգրավվող բոլոր անձինք պետք է տեղեկացվեն, որ մասնակցությունից իրենց հրաժարվելը չի ազդի լեզվական թեսթավորողի տրամադրած ծառայության (դասավանդման, հետազոտության, մշակման, վարչական) որակի վրա: Թեսթ հանձնողի մասնակցությամբ հաղորդակցության ցանկացած միջոցի օգտագործումը (թուղթ, էլեկտրոնային, տեսագրում, ձայնագրում), նախքան երկրորդական նպատակներով օգտագործելը, պահանջում է տեղեկացված համաձայնություն:

- Լեզվական թեսթավորողը կձգտի իր ստացած տեղեկատվությունը հնարավորինս իմաստալից կերպով փոխանցել բոլոր համապատասխան շահատերերին:
- Հնարավորության դեպքում, թեսթ հանձնողի հետ անհրաժեշտ է խորհրդակցել նրա շահերին վերաբերող բոլոր հարցերի կապակցությամբ:

Սկզբունք 2

Լեզվական թեսթավորողը կպահպանի իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս իր թեսթ հանձնողների մասին ստացված ողջ տեղեկատվության խորհրդապահական բնույթը և այդ տեղեկատվությունը մեկ այլ կողմի փոխանցելիս կառաջնորդվի մասնագիտական դատողությամբ:

Ծանոթագրություն

- Պատճենահանված նյութերի ու ֆաքսիմիլային վերարտադրման, թեսթերի համակարգչային գրառումների և տվյալների շտեմարանների լայն կիրառման պայմաններում, երբ զանազան աղբյուրներ հարաճուն հաշվետվություն են պահանջում, իսկ թեսթ հանձնողներից ստացված տեղեկատվությունն անձնական բնույթ ունի, լեզվական թեսթավորողը պարտավոր է հարգել թեսթ հանձնողի գաղտնիության իրավունքն ու պաշտպանել թեսթավորող-թեսթ հանձնող հարաբերությանն առնչվող ողջ տեղեկատվությունը:
- Գաղտնիությունը չի կարող բացարձակ լինել, հատկապես, երբ գրառումները վերաբերում են ուսանողների, ովքեր կարող են մրցել ընդունելության կամ նշանակումների համար: Անհրաժեշտ է ուշադիր հավասարակշռություն պահպանել գաղտնիության պահպանման, իբրև լեզվական թեսթավորողի մասնագիտական պարտականության հիմնարար մաս, և այն ավելի լայն պատասխանատվության միջև, որ թեսթավորողն ունի հասարակության առջև:
- Նմանապես, համապատասխան դեպքերում, լեզվական թեսթավորողի մասնագիտական գործընկերները ևս իրավունք ունեն գննել այն թեսթ հանձնողների տվյալները, ում իրենք չեն թեսթավորել՝ մասնագիտական հանրության կողմից առաջարկվող ծառայությունները բարելավելու նպատակով: Նման դեպքերում, տվյալներին մուտք ստացած անձինք պետք է համաձայնեն պահպանել դրանց գաղտնիությունը:
- Թեսթ հանձնողի տվյալները, որոնք ստացվել են անմիջապես թեսթ հանձնողից գատ այլ աղբյուրից (օրինակ՝ թեսթ հանձնող ուսանողի ուսուցչից) ենթակա են գաղտնիության պահպանման նույն սկզբունքներին:
- Բացահայտման՝ օրենքով սահմանված պահանջներ կարող են լինել, օրինակ, երբ լեզվական թեսթավորողը դատարան կամ դատական ատյան է կանչվում իբրև փորձագետ վկա: Նման հանգամանքներում լեզվական թեսթավորողն ազատվում է գաղտնիության՝ իր մասնագիտական պարտականությունից:

Սկզբունք 3

Որևէ դատ, փորձ, բուժում կամ հետազոտական որևէ այլ գործունեություն իրականացնելիս, լեզվական թեսթավորողը պետք է հավատարիմ մնա ազգային ու միջազգային ուղեցույցներում ամրագրված բոլոր համապատասխան էթիկական սկզբունքներին:

Ծանոթագրություն

- Լեզվական թեսթավորման գործընթացը կախված է հետազոտական աշխատանքից, ինչն անպայմանորեն ներառում է անձանց, իբրև հետազոտության սուբյեկտների, մասնակցությունը: Այդ հետազոտական աշխատանքը պետք է համապատասխանի ակադեմիական հետաքննության լայնորեն ընդունված սկզբունքներին, հենված լինի մասնագիտական գրականության մանրակրկիտ իմացության վրա և ծրագրվի ու իրականացվի ամենախիստ չափանիշներին համապատասխան:
- Հետազոտական աշխատանքի ողջ ծավալը պետք է արդարացված լինի; այսինքն, պետք է ողջամտորեն ակնկալվի, որ առաջարկվող հետազոտությունները պատասխաններ կտան առաջադրված հարցերին:
- Հետազոտության սուբյեկտի մարդու իրավունքները միշտ գերակա են գիտության կամ հասարակության շահերի նկատմամբ:
- Երբ հետազոտության սուբյեկտը հնարավոր անհարմարության կամ ռիսկի է ենթարկվում, ապա տվյալ հետազոտության առավելությունները պետք է հաշվի առնվեն, սակայն չօգտագործվեն իբրև այդպիսին՝ արդարացնելու համար ռիսկերն ու անհարմարությունը: Անկանխատեսելի վնասակար ազդեցությունների ի հայտ գալու դեպքում, հետազոտությունը պետք է միշտ կանգնեցվի, կամ փոփոխության ենթարկվի:
- Բոլոր հետազոտական առաջարկները պետք է գնահատվեն էթիկայի անկախ հանձնաժողովի կողմից՝ ապահովելու գիտական ու էթիկական բարձրագույն չափանիշներին այդ հետազոտությունների համապատասխանությունը:
- Անհրաժեշտ է սուբյեկտին նախօրոք համապատասխան տեղեկատվություն տրամադրել հետազոտական աշխատանքի նպատակների, մեթոդների, ռիսկերի ու անպատեհությունների մասին: Տեղեկատվությունը պետք է փոխանցվի այնպես, որ լիովին ընկալվի: Համաձայնությունը պետք է լինի ազատ, առանց ճնշման, պարտադրանքի, կամ սթրեսի:
- Սուբյեկտն ազատ է հրաժարվել հետազոտությանը մասնակցելուց, կամ կասեցնել դրան իր մասնակցությունը ցանկացած պահի՝ նախքան հետազոտության արդյունքների հրապարակումը: Նման հրաժարման արդյունքում սուբյեկտի բուժումը չի վտանգվի:
- Հատուկ հոգատարություն պետք ցուցաբերել այն սուբյեկտների դեպքում նախնական համաձայնություն ստանալիս, ովքեր կախյալ հարաբերության մեջ են (օրինակ՝ ուսանողներ, ծերեր, ոչ-սահուն գիտելիքների տեր անձինք, ովքեր դեռ սովորում են):
- Անչափահասների դեպքում, համաձայնությունը պետք է ստացվի ծնողից կամ խնամակալից, սակայն նաև երեխայից, եթե վերջինս բավարար հասունություն կամ ընկալունակության մակարդակ ունի:
- Հետազոտական աշխատանքի ընթացքում ստացված գաղտնի տեղեկատվությունը չի կարող օգտագործվել այլ նպատակներով, քան այն, ինչ սահմանված է հետազոտության հաստատված աշխատակարգով:
- Հետազոտության արդյունքների հրապարակումը պետք է լինի ճշմարտացի և ճշգրիտ:
- Հետազոտական աշխատանքի զեկույցների հրապարակման պարագայում մասնակցություն բերած սուբյեկտներին նույնականացնել չի թույլատրվում:

Սկզբունք 4

Լեզվական թեսթավորողն իր հնարավորության սահմաններում թույլ չի տա, որ իր մասնագիտական գիտելիքը կամ կարողությունները չարաշահվեն:

Ծանոթագրություն

- Լեզվական թեսթավորողն իր մասնագիտական գիտելիքն ու կարողությունները գիտակցաբար չի օգտագործի այնպիսի նպատակներով, որոնք հակասում են իրենց թեսթ հանձնողների շահերին: Երբ թեսթավորողի միջամտության ընթացքն ուղղակիորեն չի նպաստում թեսթ հանձնողի շահերին (օրինակ՝ երբ վերջինիս խնդրվում է, իբրև փորձի սուբյեկտ, հանդես գալ կարողությունների գնահատման մի թեսթում, որը մեկ այլ իրավիճակի համար է նախատեսված), ապա դրա բնույթը պետք է բացարձակապես պարզ դարձվի:
- Հասարակության մեջ տիրապետող բարոյական, կրոնական, կամ այլ արժեքներին չհամապատասխանելը, կամ անցանկալի ներգաղթողի կարգավիճակը չի կարող որոշիչ գործոն հանդիսանալ լեզվական կարողությունների գնահատման հարցում:
- Անկախ իրավական հանգամանքներից, լեզվական թեսթավորողը չի մասնակցի, ուղղակի կամ անուղղակի կերպով, որևէ խոշտանգման, կամ դաժան, անմարդկային, կամ ստորացուցիչ պատժի որևէ այլ ձևի կիրառման (տե՛ս 1975 թ. Տոկիոյի հռչակագիրը³):

Սկզբունք 5

Լեզվական թեսթավորողը կշարունակի զարգացնել իր մասնագիտական գիտելիքը, փոխանակել այն գործընկերների և լեզվի այլ մասնագետների հետ:

Ծանոթագրություն

- Շարունակական կրթությունն ու գիտելիքի կատարելագործումը մասնագիտական գործունեության համար հիմնարար նշանակություն ունեն: այդ ուղղությամբ առաջընթաց չունենալը հավասարազոր է թեսթ հանձնողների նկատմամբ վատ վերաբերմունքի:
- Լեզվական թեսթավորողը կօգտվի շարունակական կրթության՝ իրեն հասանելի զանազան մեթոդներից: Դրանք կարող են ներառել լեզվական թեսթավորման շարունակական ծրագրերին ու մասնագիտական համաժողովներին մասնակցությունը, ինչպես նաև համապատասխան մասնագիտական պարբերականների կանոնավոր ընթերցումը:
- Լեզվական թեսթավորողը կօգտագործի առկա հնարավորությունները՝ շփվելու գործընկերների և լեզվի համապատասխան այլ մասնագետների հետ, իբրև իր մասնագիտական գիտելիքը զարգացնելու կարևոր ձև:
- Լեզվական թեսթավորողն իր նոր գիտելիքը կփոխանակի գործընկերների հետ՝ ճանաչված մասնագիտական պարբերականներում տպագրվելու, կամ հանդիպումների միջոցով:
- Ակնկալվում է, որ լեզվական թեսթավորողը կնպաստի լեզվական թեսթավորողի պատրաստման դասընթաց անցնողների կրթությանն ու մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև այդ դասընթացի առանցքային պահանջների ուղենիշների մշակմանը:
- Լեզվական թեսթավորողը պատրաստ կլինի նպաստել լեզվական մասնագիտությունների ԱՎԵԼԻ ԼԱՅՆ հանրության շրջանակներում ուսանողների կրթությանը:

³ Declaration of Tokyo 1975.

Սկզբունք 6

Լեզվական թեսթավորողը պատասխանատվության իր բաժինն ունի լեզվական թեսթավորման մասնագիտության ամբողջականության պահպանման գործում:

Ծանոթագրություն

- Լեզվական թեսթավորողն առաջ կմղի և կամրապնդի իր մասնագիտության ամբողջականությունը՝ նպաստելով գործընկերների շրջանում վստահության ու փոխադարձ պատասխանատվության մթնոլորտի զարգացմանը: Տարակարծության պայմաններում, տեսակետները կարտահայտվեն անկեղծորեն ու հարգանքով, այլ ոչ փոխադարձ նվաստացումներով:
- Լեզվական թեսթավորողը նորմեր է զարգացնում ու կենսագործում հանրության անունից: Այդ առումով, նա արտոնյալ դիրք ունի, ինչն իր հետ բերում է անձնական ու բարոյական համապատասխան չափանիշների պահպանման պարտականություն՝ սեփական մասնագիտական գործունեության ոլորտում, ինչպես նաև անձնական կյանքի այն ոլորտներում, որոնք կարող են ազդել այդ գործունեության ամբողջականության վրա:
- Լեզվական թեսթավորողը, ով կտեղեկանա որևէ գործընկերոջ ոչ-արհեստավարժ պահվածքի մասին, համապատասխան քայլեր կձեռնարկի; սա կարող է ներառել համապատասխան ատյաններին զեկուցելը:
- Այս Էթիկայի կանոնագրքի պահանջները չկատարելը կդիտվի բացառիկ լրջությամբ, և կարող է հանգեցնել խիստ տույժերի, ներառյալ ILTA-ի անդամության դադարեցումը:

Սկզբունք 7

Լեզվական թեսթավորողն իր հասարակական դերում կձգտի բարելավել լեզվական թեսթավորման, գնահատման ու դասավանդման որակը, կնպաստի այդ ծառայությունների արդար բաշխմանն ու իր ավանդը կրերի լեզվական իմացության ու լեզվական տիրապետման ոլորտներում հանրության կրթության գործին:

Ծանոթագրություն

- Լեզվական թեսթավորողը հատուկ պարտականություն ունի նպաստել լեզվական թեսթավորման անցկացման/ծառայությունների ոլորտի զարգացմանը՝ նկատի ունենալով, որ թեսթ հանձնողներից շատերը լուսանցքայնացված են ու անգործ՝ լեզվի կրող չլինելու հանգամանքի բերումով:
- Լեզվական թեսթավորողը, իր գիտելիքի ու փորձի բերումով, պետք է պատրաստ լինի խորհուրդ տալ այն անձանց, ովքեր պատասխանատվություն են կրում լեզվական թեսթավորման ծառայությունների համար:
- Լեզվական թեսթավորողը պետք է պատրաստ լինի հանդես գալ փաստարկուի դերում և միանալ ուրիշներին՝ ապահովելու համար, որ լեզվական թեսթ հանձնողներին տրամադրվում է լեզվական թեսթավորման լավագույն ծառայությունը:
- Լեզվական թեսթավորողը պետք է պատրաստ լինի աշխատել խորհրդատվական, պաշտոնական, կամավոր ու առևտրական այն կառույցների հետ, որոնք դեր ունեն լեզվական թեսթավորման ծառայությունների տրամադրման ոլորտում:
- Լեզվական թեսթավորողը համապատասխան քայլեր կձեռնարկի, եթե ծառայությունները, ֆինանսական սահմանափակումների կամ որևէ այլ պատճառով, նվազագույն չափանիշներից ավելի ցածր վիճակում հայտնվեն: Բացառիկ դեպքերում, լեզվական թեսթավորողը կարող է դադարեցնել իր հարաբերությունը նման ծառայությունների հետ, պայմանով, որ այն չի վնասի իր թեսթ հանձնողներին:

- Լեզվական թեսթավորողը պետք է պատրաստ լինի մեկնաբանել ու հանրության շրջանում տարածել համապատասխան գիտական տեղեկատվություն և հիմնավորված մասնագիտական կարծիքներ: Ընդամին, լեզվական թեսթավորողը պետք է պարզաբանի իր կարգավիճակն առ այն, արդյո՞ք նա որևէ ճանաչված մասնագիտական կառույցի անունից է հանդես գալիս, թե՞ ոչ: Եթե իր արտահայտած տեսակետները տարբերվում են հանրության շրջանում ընդունվածներից, ապա նա պետք է հայտնի այդ մասին:
- Տրամաբանական է, որ լեզվական թեսթավորողը գիտականորեն հիմնավորված մասնակցություն կբերի զգայուն հասարակական-քաղաքական խնդիրների, օրինակ՝ ռասայական հարաբերությունների, արտոնագրկության ու մանկական դաստիարակության շուրջ հանրային բանավեճին:
- Լեզվական թեսթավորողը կտարբերակի իր դերն իբրև մասնագիտական գիտելիքով օժտված դասավանդող, և իբրև քաղաքացի:
- Այս սկզբունքի ներքո իր պարտականությունները կատարելիս, լեզվական թեսթավորողն ուշադիր կլինի՝ զերծ մնալու ինքնագովազդից ու գործընկերներին նվաստացնելուց:
- Լեզվական թեսթավորողը հստակորեն կհավաստիացնի, որ չի հավակնում (և չի ակնկալվում, որ կհավակնի) ողջ համապատասխան գիտելիքին տիրապետող միակ անձի համբավին:

Սկզբունք 8

Լեզվական թեսթավորողը հաշվի կառնի այն հասարակության նկատմամբ իր պարտականությունները, որում նա աշխատում է՝ միաժամանակ ընդունելով, որ այդ պարտականությունները կարող են երբեմն հակասության մեջ լինել թեսթ հանձնողների ու այլ շահատերերի նկատմամբ իր պատասխանատվության հետ:

Ծանոթագրություն

- Երբ թեսթի արդյունքների հասցեատերը հաստատություն է (պետական մարմին, մասնագիտական մարմին, համալսարան, դպրոց, ընկերություն), լեզվական թեսթավորողն ունի այդ արդյունքները ճշգրիտ կերպով զեկուցելու պարտականություն՝ անկախ այն բանից, թե որքան անցանկալի են դրանք թեսթ հանձնողի կամ այլ շահատերերի համար (ընտանիք, հեռանկարային աշխատատու, ևն):
- Իբրև այն հասարակության անդամ, որում նա աշխատում է, լեզվական թեսթավորողը պետք է ընդունի այդ հասարակության թեսթային պահանջների նկատմամբ իր պարտականությունը՝ նույնիսկ, եթե ինքն անձամբ համաձայն չէ դրանց հետ: Եթե այդ անհամաձայնությունն այնքան խորն է, որ կարող է դիտվել իբրև խղճի ընտրության վրա հիմնված առարկություն, ապա նա պետք է իրավունք ունենա չտրամադրել իր մասնագիտական ծառայությունները:

Սկզբունք 9

Լեզվական թեսթավորողը կանոնավոր կերպով նկատի կառնի բոլոր շահատերերի համար իր ծրագրերի հնարավոր հետևանքները՝ թե՛ կարճաժամկետ, և թե՛ երկարաժամկետ առումով՝ իրավունք վերապահելով կասեցնել իր մասնագիտական ծառայությունների տրամադրումը խղճի ազատության նկատառումներով:

Ծանոթագրություն

- Իբրև արհեստավարժ, լեզվական թեսթավորողը պատասխանատվություն ունի գնահատել իրեն ներկայացված ծրագրի էթիկական հետևանքները: Մինչ նա չի կարող նկատի ունենալ բոլոր հնարավոր զարգացումները, նա պետք է մանրակրկիտ կերպով գնահատի հավանական

հետևանքները, և եթե այդ հետևանքներն իր կարծիքով մասնագիտական առումով անընդունելի են, կասեցնի իր ծառայությունների տրամադրումը: Նման դեպքերում, նա պետք է, իբրև կարգ, խորհրդակցի գործընկեր լեզվական թեսթավորողների հետ՝ որոշելու, թե որքանով են մյուսները համաձայն իր տեսակետին՝ ընդամին մշտապես իրավունք վերապահելով խղճի ազատության հիմքով անհատական դիրքորոշում որդեգրել, եթե իր գործընկերները նույն կարծիքին չեն:

© Հեղինակային իրավունքը՝ ILTA-ի